

թեւակոխէ երեսուն տարեկանին՝ Նազարէթէն կու գայ Յորդանան՝ ուր կը մկրտուի Յովհաննէս Մկրտչէն, և «նոյն ժամայն Հոգին հանէ զնա յանապատ»։ Տէրը Քառասնօրեայ փորձութենէն յետոյ, դեռ Գալիլիա չվերադարձած՝ կ'ընտրէ իրեն աշակերտները՝ որոնք պիտի ըլլային իր Աւետարանին քարոզիչները. ընտրեալներէն մին՝ Փիլիպպոս՝ Նաթանայէլը կը գտնէ ու կ'ըսէ անոր թէ՝ Անիկա՝ որուն համար գրած էին Օրէնքը ու Մարգարէք, գտանք — Նազարէթցի Յովսէփի որդին Յիսուսը. Նաթանայէլ կ'ըսէ. «Իսկ ի Նազարէթէ մարթ ի՞նչ իցէ բարեոյ իմիք լինիլ»։ Այս խօսքը ակնարկութիւն մ'է Նազարէթի աննշան վիճակին կամ տեղացիներու անոպայ վարուց և կամ ուրիշ պատճառի մը՝ որուն վրայ լռութիւն կը պահէ Աւետարանը։ Նաթանայէլ ի վերջոյ կը հետեւի Յիսուսի։ Յիսուս կ'ուզէր քարոզել եւ գործել նաեւ իր ծննդավայրին՝ Նազարէթի մէջ, բայց իր հայրենակիցները, ինչպէս Նաթանայէլի խօսքերէն ալ կը հասկցուի, և Յիսուսի անձին նկատմամբ Նազարէթի ժողովրդեան կողմէն կատարուած մէկ արարքն ալ ապացոյց է ասոր, արժանի չէին Անոր քարոզութեան և հրաշքներուն։ Այդ պատճառաւ կ'ըսէ Աւետարանը Յիսուսի համար թէ «զարմանայր վասն անհաւատութեան նոցա»։ Մեր Տէրը կը շարունակէր իր քարոզութիւնները Գալիլիոյ ամէն կողմերը և կը փառաբանուէր ամենուն կողմէն։ Եկաւ Նազարէթ «ուր սնեալն էր»։ Տեղւոյն ժողովարանին մէջ Եսայի Մարգարէին մէկ հատուածը կը բանայ ու կը բացատրէ Նազարէթցիներուն, որ կը զարմանային Անոր իմաստութեան և կը վկայէին անոր շնորհաց խօսքերուն։ Բայց Յիսուս հոն հրաշք չի գործեր, վասն զի արժանի չէին, անհաւատներ էին և թէ «չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում»։ Կոչումներ կ'ընէ կեանքէն եղլաւ և եղլիսէ մարգարէներուն՝ որոնք Իսրայելի անարժանութեան համար Աստուծոյ գթութեան տուրքը շնորհեցին Սաբեփթացի այրի կնոջ և ասորի Նէեմանին։ Մարգարէից այս շնորհնկալները օտարներ էին, բայց կ'արժանաւորէին նրիթական պարզեանքու և բարոյական շնորհաց. Յիսուս Նազարէթի մէջ այս վճռական քարոզութեամբ հասկցուց թէ Աստուած կը կոչէ արժանաւորները առանց ազգի խտրութեան և իր շնորհը պիտի ծաւալէր առ հասարակ բոլոր մարդոց, և իր Աւետարանը պիտի քարոզուէր բոլոր տիեզերքի մէջ և բոլոր ազգերը պիտի